Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

ՀՏԴ 373.3 : 159.922.7

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Տ.Վ.ԵՆՈՔՅԱՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: yenokyant@gmail.com

Հեղինակը հոդվածում ներկայացնում է պատմական ակնարկ կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողության ձևավորման հիմնախնդրի վերաբերյալ: Հոդվածում անդրադարձ է կատարվել տարբեր հեղինակների կարծիքներին՝ նշված հիմնախնդրի վերաբերյալ: Հեղինակը հաղորդակցումն դիտարկել է որպես անձի հասարակական, հոգևոր և անձնային դրսևորման կարևոր միջոց՝ կարևորելով հանրակրթության ոլորտում նպատակաուղղված աշխատանք իրականացնելը հաղորդակցական կարողությունների ձևավորման ուղղությամբ, քանի որ այն անձի ձևավորման հիմնական գործոններից է:

Բանալի բառեր. *կրտսեր դպրոցական, հաղորդակցական կարողություն, հաղորդակցման մշակույթ, մանկավարժական հաղորդակցում, անձի ձևավորում, անձի սոցիալ-մշակութային միջավայր:*

Ներկայացված է խմբագրություն 17.07.2017թ.

Մարդկանց միջև հաղորդակցումը մշտապես դիտվել է որպես միջանձնային հարաբերությունների կազմակերպման և կարգավորման, խաղաղության մշակույթի ապահովման, փորձի փոխանակման ծագած խնդիրների լուծման անփոխարինելի միջոց: Պատմականորեն միշտ չէ, որ մարդկանց միջև հաղորդակցումն իրականացվել է հոդաբաշխ խոսքով. նախամարդը հաղորդակցվել է ձայնարկություններով, ինքնաշեն երաժշտական գործիքներից դուրս ծորացող գույներով և այլն: Հիշենք, որ կենդանիներն ևս ունեն միմյանց հետ հաղորդակցվելու, իրար ինչ-որ բան հասկացնելու զանազան ձայնային հնարներ: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ կենդանի արարածն անառարկելիորեն կարիք ունի հաղորդակցման:

Գիտության և տեխնիկայի աննախադեպ զարգացման ընթացքում փոխվել են մարդու հաղորդակցման միջոցները, գործիքները (հիշենք Մորզեի այբուբենը՝ որպես գաղտնի հաղորդակցման հնար), զարգացում է ապրել նաև այն մեթոդիկան, որով մարդուն դեռևս վաղ տարիքից սովորեցնում են հաղորդակցվել: Այս գործընթացը կազմակերպված բնույթ է ստանում՝ մասնավորապես երեխայի դպրոցական ուսումնառության տարիներին:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողության զարգացումն ու հետագա ձևավորումն ուսուցման գործընթացում արդիական խնդիր է. այն երեխայի կենսակերպի կազմակերպման կարևորագույն կողմերից է, քանի որ հաղորդակցվելու կարողությունը մարդու հոգեկան զարգացման, սոցիալականացման և անձի ձևավորման, ինչպես նաև

ուսուցման արդյունավետության կարևոր պայմանն է: Սովորաբար ցանկացած կարողություն ձևավորվում է գործունեության մեջ, իսկ հաղորդակցման կարողությունները ձևավորվում և կատարելագործվում են շփման գործընթացում: Այդ կարողություններն անվանում են «սոցիալական բանականություն», «հոգեբանագործնական միտք», «հաղորդակցական բանիմացություն», «հաղորդասիրություն»: Հաղորդակցման կարողությունները ձևավորվում են ոչ միայն ուսումնական, այլև՝ արտադասարանական գործունեության ընթացքում:

Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է հաղորդակցական կարողության զարգացման բարենպաստ շրջան, թեև երեխաների մեջ շփման, խոսքային փորձառության գիտակցական ընկալման հանդեպ հետաքրքրասիրություն առաջանում է դեռևս նախադպրոցական տարիքում: Այդ է պատճառը, որ պետական կրթական չափորոշիչներում նախատեսված են անհատի հաղորդակցման ապահովման պարտադիր կարողությունների զարգացման գործընթացին և արդյունքներին ներկայացվող ներառվող պահանջներ. կարողանալ լսել և ունկնդրել հասակակցին, հիմնավորել սեփական դիրքորոշումը [1]:

Հաղորդակցման կարողությունների ձևավորման գործընթացը ենթադրում է աշակերտին հարցադրում, հարցի ունկնդրում և հարցերի պատասխանների հստակ ձևակերպում, ուշադիր ունկնդրում, հիմնախնդրի ըմբռնում և ուսումնասիրվող խնդրի ակտիվ քննարկում, հաղորդակցի հայտարարությունների մեկնաբանում, սեփական կարծիքի մեկնաբանում, հիմնավորում, զրուցակցին ապրումակցում, սեփական արտահայտություններն ըստ զրուցակիցների ընկալման հնարավորությունների հարմարեցում և այլն:

Օ. Ն. Իստրանովան [2] նշում է հաղորդակցման կարողությունների հետևյալ բաղադրիչները.

- կարողանալ լսել,
- կարողանալ հասկանալ և ընդունել ուրիշի կարծիքը,
- կարողանալ կարգավորել հակամարտությունը,
- կարողանալ համարժեք գնահատել իրեն և այլոց :

Մեր կարծիքով հաղորդացման կարողության նշված բաղադրիչներին պետք է ավելացնել մի քանի բաղադրիչ ևս, առանց որոնց հաղորդակցումը չի կարող լիարժեք համարվել. հաղորդակցման խնդիրները չեն լուծվի: Մենք կարևոր ենք համարում սեփական կարծիքը հաշվի առնելու (ոչ թե ընդունելու) և դիմացինին սեփական կարծիքին բերելու բաղադրիչները:

Կրտսեր դպրոցականների հետ աշխատանքի գործընթացում կիրառելի են տարբեր ձևեր, մեթոդներ և հնարներ, որոնք նպաստում են հաղորդակցման կարողությունների, շփման բոլոր բաղադրիչների զարգացմանը՝ չմոռանալով, որ շփման հնարների ձևավորումն իրականացվում է հնարների ամբողջական համակարգի միջոցով՝ նկատի ունենալով անձի հոգեկան, մտավոր, գործառական հատկանիշները, որոնք իրարից անբաժանելի են:

Ապացուցված է, որ տարբեր տարիքի, կրթության, մշակույթի, հոգեկան զարգացման մակարդակի, մասնագիտական և ապրելակերպի փորձ ունեցող մարդիկ միմյանցից տարբերվում են իրենց հաղորդակցման կարողություններով: Կիրթ և մշակութային կյանքով ապրող մարդիկ տիրապետում են առավել արտահայտիչ հաղորդակցման կարողությունների, քան՝ անկիրթ և մշակութային կյանքով չապրող մարդիկ:

Ընդունված է այն կարծիքը, որ մարդու բառապաշարն որքան հարուստ է նա այնքան առավել դյուրին և հասկանալի է հաղորդակցվում: Այդ է պատճառը, որ ուսումնական գործունեության ընթացքում մշտապես կարևորվում է աշակերտների բառապաշարի զարգացումը՝ այդ խնդրի շուրջ իրականացնելով ծրագրավորված աշխատանք:

Հաղորդակցման միջոցների ու ձևերի տիրապետման մակարդակը, որպես կանոն, պայմանավորված է անձի տարիքային առանձնահատկություններով: Երեխաներն դեռևս վաղ մանկության շրջանում ակտիվորեն և անկեղծ հաղորդակցվում են, ընդ որում՝ ոչ խոսքային միջոցներով: Այդ շրջանում թերզարգացած է նրանց խոսքով արձագանքելու ունակությունը, և, բնականաբար, շփումն ունի համեմատաբար հուզական բնույթ: Տարիքի հետ մեկտեղ՝ վերջիններս աստիճանաբար խունանում են. հաղորդակցման ձևերը դառնում են առավել կշռադատված, իրատեսական, արտահայտիչ: Կատարելագործվում է նաև այլոց խոսքին արձագանքելու ունակությունը:

Մեր ժամանակներում հաղորդակցման մշակույթի ձևավորումն ավելի քան արդիական է, քանի որ փոփոխվել են սովորողներին չափահաս կյանքին պատրաստելու ժամանակակից պահանջները: Հաղորդակցման մշակույթի ձևավորման հարցերը միշտ եղել են մանկավարժության ուշադրության կենտրոնում, և այդ հարցը ուսումնասիրվել է տարբեր տեսանկյուններով (հաղորդակցման մշակույթ, վարքագիծ, միջանձնային հարաբերություններ, խոսքի մշակույթ և այլն): Հաղորդակցման տեխնիկայի հմտությունների բացակայությունը ցանկացած ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակցին տանում է գիտելիքի, գաղափարների, կարծիքի և զգացմունքների աղաղաղված փոխանցման և ընդունման: [3]Այսինքն՝ ուսումնական գործունեությունն ուղեկցվում է հաղորդակցման մշակույթի ձևավորման և զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքներով, քանի որ այն հիմնական և կարևորագույն կարողություն է:

Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ինքնատիպությունն ու ձևավորման գործընթացի առանձնահատկություններին են անդրադարձել բազմաթիվ հեղինակներ: Այդ թվում՝ Դ.Բ.Էլկոնինը, Վ.Վ.Դավիդովը, Ե.Ե. Սապոգովան, Ա. Ա. Լեոնտևը, Բ.Ֆ. Լոմովը, Ս.Լ. Ռուբեյնշտեյնը:

Դ.Բ.Էլկոնինը և Վ.Վ.Դավիդովը հաղորդակցման կարողության հիմնախնդիրը դիտարկում են հոգեբանության տեսանկյունով: [4,5] Նրանք նշում են, որ երեխան տարրական դասարաններում յուրացնում է հատուկ հոգեբանաֆիզիկական և հոգեբանական գործողություններ, որոնք պետք է ապահովեն գրելու, կարդալու, մաթեմատիկական, ֆիզիկական պատրաստվածության, նկարելու, աշխատանքի ուսուցման և այլ ուսումնական գործընթացները: Ելնելով կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններից՝ գտնում են, որ անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ, առողջ միջավայր, որպեսզի հարթ և դյուրին իրականացվի ուսուցման գործընթացը՝ այդպիսի միջավայրի պայմաններից մեկը համարելով երեխաների հաղորդակցվելու կարողությունը:

Նշված հեղինակները հաղորդակցական պահանջմունքը համարում են անձի ձևավորվածության կարևորագույն բնութագրիչ և դիտարկում որպես անձի սոցիալ-մշակութային միջավայրի փոխգործունեություն՝ վերջինը համարելով այդ պահանջմունքի աղբյուր, որը տեղեկատվության փոխանցման երկկողմանի գործընթաց է՝ հանգեցնելով փոխըմբռնման: Եթե չլինի փոխըմբռնում, ուստի հաղորդակցումը չի կայանա:

Հաղորդակցումը կարևորագույն սոցիալական պահանջմունք է, առանց որի դանդաղում, այնուհետև՝ կասեցվում է անձի ձևավորումը: Անառարկելի է, որ մարդը միշտ ունի այլ մարդկանց հետ հաղորդակցվելու պահանջմունք, այսինքն՝ հաղորդակցումը կենսագործունեության պայման է:

Ա. Ա. Լեոնտևը 20-րդ դարի 70-ական թվականներին հաղորդակցման տեսական հասկացությունը դիտարկեց որպես նրա հաղորդակցական գործունեության տեսության զարգացում: Հաղորդակցություն հասկացությունը նա ներկայացրեց որպես համակարգ ձևավորող հասկացություն, որը ոչ միայն ժամանակակից հոգեբանության սկզբունքային կատեգորիաներից է, այլ նաև «նպատակաուղղված և դրդապատճառային գործընթացների

համակարգ, որն ապահովում է մարդկանց փոխգործունեությունը կոլեկտիվ գործունեության ժամանակ, հասարակական, անձնային և հոգեբանական հարաբերությունների իրականացումը և առանձնահատուկ միջոցների՝ հատկապես լեզվի կիրառելիությունը» [6, էջ 240]:

Հաղորդակցման լայն և միաժամանակ տարաբնույթ հասկացությունը թույլ է տալիս այդ տեսական համակարգը կիրառել ոչ միայն միջանձնային հարաբերությունների ժամանակ, այլ նաև փոքր և մեծ հասարակական խմբերի դեպքում, մասնավորապես դասախոսական և մանկավարժական հաղորդակցման գործընթացներում, ինչպես նաև հաղորդակցական այլ ձևերի ազդեցություն ոչ միայն անհատի, այլև զանգվածային հաղորդակցման ժամանակ, որի ինքնատիպությունը հաղորդակցվողների միջև ուղիղ կապի բացակայությունն է, հաղորդակցվողի անհայտ լինելը, վերջապես՝ մշակույթը, որը Ա. Ա. Լեոնտևը դիտարկում է որպես մարդկային շփման առանձնահատուկ տեսակ կամ միջոց [6, էջ 296]:

Մանկավարժական գործընթացն անհնար է պատկերացնել առանց հաղորդակցման. ճիշտ և գրագետ կազմակերպված հաղորդակցումն ապահովում է ուսումնադաստիարակչական խնդիրների արդյունավետ լուծումը: Լեոնտևը, կարևորելով մանկավարժական հաղորդակցումը, նշում է.

«Մանկավարժական հաղորդակցումը դասավանդողի մասնագիտական հաղորդակցումն է դասի մասնակիցների հետ կամ դասից դուրս (ուսուցման և դաստիարակության գործընթացում), որն ուղղորդված է (եթե այն լիարժեք է և օպտիմալ) ուսումնական գործունեության և մանկավարժի ու սովորողների, ուսումնական կոլետիվում այլ բնույթի հոգեբանական օպտիմացմանը» [7]: Ինչ խոսք հաղորդակցումը բավականին բարդ հոգեբանական գործընթաց է, որն ուղեկցվում է մի շարք հոգեկան գործընթացներով, որն արտահայտվում է խոսքի՝ բառերի, շարժումների, դիմախաղի միջոցով:

Ըստ Բ. Ֆ. Լոմովի՝ հաղորդակցական գործընթացը կառուցվում է որպես «գործողությունների համակարգ»: Յուրաքանչյուր այդպիսի «գործողությունների համակարգ» առնվազն 2 սուբյեկտների փոխգործունեություն է, 2 մարդու, որոնք օժտված են շփման նախաձեռնողական հատկությամբ: Սրանով է բնութագրվում հաղորդակցական գործունեության երկխոսությունը [8]: Այսինքն, երկխոսությունը կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների զարգացման գործընթացի արդյունավետ հնարներից է: Բ. Ֆ. Լոմովը կարևորել է երկխոսությունը հաղորդակցական գործունեության մեջ, քանի որ այն առավելագույնս նպաստում է երեխայի խոսքի և հաղորդակցական ունակությունների զարգացմանը, շրջապատող միջավայրում համագործակցելու կարողության ձևավորմանը:

Խոսքի շնորհիվ յուրաքանչյուր մարդու անհատական գիտակցությունը, լեզվի միջոցով սնվում և հարստանում է հասարակական փորձի արդյունքներով՝ չսահմանափակվելով անձնական փորձն ու սեփական դիտարկումները: Այս ճանապարհով յուրաքանչյուր մարդու դիտարկումներն ու գիտելիքները դառնում են կամ կարող են դառնալ ամենքի սեփականությունը:

Ս. Լ. Ռուբենշտեյնի կարծիքով՝ խոսքը յուրովի բացահայտում է այլ մարդու գիտակցությունը՝ դարձնելով այն մատչելի նրա վրա նրբորեն ազդելու համար: Ներգրավվելով իրական հարաբերությունների գործընթաց, մարդկանց ընդհանուր գործունեություն՝ խոսքը հաղորդակցման միջոցով ներառում է իր մեջ մարդկանց գիտակցությունը: Խոսքի շնորհիվ մի մարդու գիտակցությունը կարող է փոխանցվել մյուսին [9]:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ հաղորդակցումն անձի հասարակական, հոգևոր և անձնային դրսևորման կարևոր միջոցներից է, սոցիալական

պահնաջմունք, որի միջոցով անձը կարողանում է տեղեկատվություն ստանալ և փոխանցել, շփվել մարդկանց հետ, ճանաչել շրջակա միջավայրը:

Այսպիսով, հաղորդակցումը բարդ գործընթաց է, որը շաղկապված է անձի զարգացման տարբեր գործոններով և պայմանավորված տարիքով՝ փոխվում է անձի շփման շրջանակը: Շատ կարևոր է, թե երեխան ինչ միջավայրում է մեծանում և դրանով էլ պայմանավորված տարբեր կերպ է ձևավորվում հաղորդակցական կարողությունները: Դպրոցն այն հիմնական միջավայրն է, որը հավասար մանկավարժական պայմաններ է ապահովում կրտսեր դպրոցականների հաղորդակցական հմտությունների զարգացման համար: Ուստի պատահական չէ, որ նախադպրոցական և տարրական կրթության մայրենիի ծրագրերում երեխաների հաղորդակցական կարողության զարգացումը համարվում է մայրենիի կարևոր բաղադրիչ: Անհրաժեշտ է, որ հանրակրթության ոլորտում նպատակաուղղված աշխատանք իրականացվի հաղորդակցական կարողությունների ձևավորման ուղղությամբ, քանի որ այն անձի ձևավորման հիմնական գործոններից է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կրթության պետական չափորոշիչ, 2011թ., էջ 36-37:
2. Истратова О. Н. Практикум по детской психокоррекции: игры, упражнения, техники / – Изд. 4-е – Ростов н./Д.: Феникс, 2010, с 5
3. Баныкина С. В. Педагогическая конфликтология: состояние, проблемы исследования и перспективы развития // Современная конфликтология в контексте культуры мира. Москва, 2001. , с.324
4. Эльконин, Д.Б. Психология обучения младшего школьника / Д.Б. Эльконин. – М., 1974. ,с. 34
5. Давыдов В.В. Проблемы развивающего обучения / В. В. Давыдов. – М.: Педагогика, 1986, с. 85
6. Леонтьев, А.А. Психология общения: учебное пособие / А.А. Леонтьев. – 3-е издание. – Москва : Смысл : Академия, 2005, с. 240,296
7. Леонтьев, А.А. Педагогическое общение / А.А. Леонтьев ; Под ред. М.К. Кабардова. - 2-е изд. перераб. и дополн. - М.: - Нальчик, 1996, с.16
8. Ломов Б. Ф., Проблемы общения в психологии: Сборник статей / АН; Ин-т социологии.; Отв. ред. — М.: Наука, 1981.-280 с.
9. Рубинштейн С.Л. Основы общей психологии. – СПб.: Питер, 2000. http://www.gumer.info/bibliotek_Buks/Psihol/rubin/11.php

РЕЗЮМЕ
ЗАДАЧА ФОРМИРОВАНИЯ КОММУНИКАТИВНОЙ СПОСОБНОСТИ У МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

Т.В. ЕНОКЯН

В статье автор представляет исторический обзор о проблеме формирования коммуникативной способности у младших школьников. В статье затронута мнение разных авторов о данной проблеме. Автор рассматривал коммуникативность как важное средство общественного, духовного и личностного проявления индивида, подчеркивая важность осуществления целенаправленной работы в области общего образования, поскольку это основной фактор формирования личности.

SUMMARY
THE COMMUNICATION SKILLS FORMATION ISSUE OF JUNIOR SCHOOLCHILDREN

T.V. YENOKYAN

In the article the author provides historical overview of the issue of formation of communication skills of elementary school children. In the article the author makes reference to different authors' views about the mentioned issue. The author considers communication skills as an important factor of a person's social, spiritual and personal appearance, emphasizing the need to take measures in the public education to develop communication skills, as they are one of the main factors of a person's formation.